ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

18-ը դեկտեմբերի, 2020թ. քաղ. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստեղծված և գործող կազմակերպություն, գրանցման համար՝ 211.171.1039517, գրանցման ամսաթիվ՝ 02.10.2018թ., իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27) (այսուհետ նաև՝ ՀՖՖ կամ Կազմակերպություն) Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2020թ. դեկտեմբերի 18-ին, ժամը 12:00-ին՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Կոմիտեի նիստին մասնակցել են հետևյալ անդամները՝

Նախագահ՝ Ռուբեն Սինոյան
Անդամներ՝ Վահան Բերակչյան
Բաբկեն Ղալոյան
Արման Ալաբերքյան
Տիգրան Իսրաելյան
Հայկուհի Ռշտունի

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) նիստն անցկացնելու համար պահանջվող քվորումն ապահովված էր:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստը նախագահում էր ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանը, նիստն արձանագրում էր քարտուղար Հայկուհի Ռշտունին:

Օրակարգ

1. 30/10/2020թ.-ին VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10-րդ մրցափուլի «Շիրակ»-«Նոա» (ԲԽ047) հանդիպման ընթացքում և դրանից հետո տեղի ունեցած միջադեպի քննություն.

2. 31/10/20թ.-ին VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10-րդ մրցափուլի «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) հանդիպման ընթացքում և դրանից հետո տեղի ունեցած միջադեպի քննություն.

Հարց 1.

1. 30/10/2020թ.-ին տեղի ունեցած Vbet Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10-րդ մրցափուլի «Շիրակ»-«Նոա» (ԲԽ047) հանդիպման ընթացքում և դրանից հետո տեղի ունեցած միջադեպի քննություն.

Հիմք ընդունելով գործի վարույթի ընթացքում ուսումնասիրված ապացույցները՝ Կոմիտեն հաստատված է համարում այն փաստը, որ 30/10/20թ.-ին VBet Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10-րդ մրցափուլի «Շիրակ»-«Նոա» հանդիպման ընթացքում և խաղից հետո դաշտի տեր թիմը չի ապահովել խաղադաշտում կարգ ու կանոնը, որի հետևանքով հանդիպման ՀՖՖ պատվիրակի հասցեին հնչեցվել են վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ և ցուցաբերվել է անհարգալից վերաբերմունք, ինչը զուգորդվել է նաև հանդիպման ՀՖՖ պատվիրակին մարմնական վնասվածք հասցնելով։

Ղեկավարվելով ՀՖՖ կանոնադրությամբ, ինչպես նաև կատարելով կիրառելի և վերաբերելի կանոնակարգերի համապատասխան նորմերի և գործում առկա փաստական հանգամանքների համադրում և վերլուծություն՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն՝

Կողմ	6 ձայն
Դեմ	0 ձայն
Ձեռնպահ	0 ձայն

քվեարկության արդյունքով ՈՐՈՇԵՑ՝

1. 30/10/20թ. «Շիրակ»-«Նոա» (ԲԽ047) խաղին «Շիրակ» ՖԱ-ի նախկին աշխատակից Արարատ Հարությունյանի կողմից հանդիպման Պատվիրակին հարվածելու, վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ թույլ տալու համար՝ միջնորդություն ներկայացնել ՀՖՖ Գործադիր Կոմիտեին՝ հաստատված փաստական հանգամանքների հիման վրա և ՀՖՖ Կանոնադրության կիրառումն ապահովելու նպատակով, քննարկելու «Շիրակ» ՖԱ-ի նախկին աշխատակից Արարատ Հարությունյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպը:

2. 30/10/20թ. «Շիրակ»-«Նոա» (ԲԽ047) խաղին «Շիրակ» ՖԱ-ի նախկին նախագահ Արման Սահակյանի կողմից հանդիպման Պատվիրակին քաշքշելու, վիրավորական արտահայտություններ թույլ տալու համար՝ միջնորդություն ներկայացնել ՀՖՖ Գործադիր Կոմիտեին՝ հաստատված փաստական հանգամանքների հիման վրա և ՀՖՖ Կանոնադրության կիրառումն ապահովելու նպատակով քննարկելու «Շիրակ» ՖԱ-ի նախկին նախագահ Արման Սահակյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպը։

Հարց 2.

2. 31/10/20թ.-ին VBet Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10-րդ մրցափուլի «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) հանդիպման ընթացքում և դրանից հետո տեղի ունեցած միջադեպի քննություն.

Գործի վարույթի ընթացքում ուսումնասիրված ապացույցները՝ Կոմիտեն հաստատված է համարում այն փաստը, որ 31/10/20թ.-ին VBet Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10-րդ մրցափուլի «Գանձասար-Կապան»-«Վան» հանդիպման ընթացքում և խաղից հետո դաշտի տեր թիմը չի ապահովել խաղադաշտում կարգ ու կանոնը, որի հետևանքով խաղի գլխավոր մրցավարի հասցեին հնչեցվել են վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ և ցուցաբերվել է անհարգալից վերաբերմունք, ինչը զուգորդվել է նաև խաղի մրցավարին մարմնական վնասվածք հասցնելով։ Միևնույն ժամանակ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն արձանագրում է, որ ՀՖՖ մրցավարական դպրոցի պատասխանատու Կարեն Նալբանդյանի մասով անհրաժեշտ է ՀՖՖ-ում անցկացնել ծառայողական քննություն։
Ղեկավարվելով ՀՖՖ կանոնադրությամբ, ինչպես նաև կատարելով կիրառելի և վերաբերելի կանոնակարգերի համապատասխան նորմերի և գործում առկա փաստական հանգամանքների համադրում և վերլուծություն՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն՝

Կողմ	6 ձայն
Դեմ	0 ձայն
Ձեռնպահ	0 ձայն

քվեարկության արդյունքով ՈՐՈՇԵՑ՝

1. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) հանդիպման գլխավոր մրցավարի հասցեին «Գանձասար-Կապան» ՖԱ-ի գործադիր տնօրեն Գառնիկ Աղաբաբյանի կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու, հայհոյանքներ և սպառնալիքներ հնչեցնելու, հարվածելու փորձ կատարելու համար, ղեկավարվելով ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ մասով ՝ գործադիր տնօրեն Գառնիկ Աղաբաբյանին զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից՝ մինչև 31/05/2021թ, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 200000 ՀՀ դրամի չափով։

2. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) հանդիպման գլխավոր մրցավարի հասցեին «Գանձասար-Կապան» ՖԱ-ի ֆուտբոլիստ Գեղամ Հարությունյանի կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու, հայհոյանքներ և սպառնալիքներ հնչեցնելու, հարվածելու փորձ կատարելու համար, ղեկավարվելով ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ մասով՝ ֆուտբոլիստ Գեղամ Հարությունյանին որակազրկել մինչև 01/03/2021թ, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 200000 ՀՀ դրամի չափով։

3. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղին հանդիպման գլխավոր մրցավարի հասցեին «Գանձասար-Կապան» ՖԱ-ի բժիշկ Արա Արամյանի կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու, հայհոյանքներ և սպառնալիքներ հնչեցնելու, հարվածելու փորձ կատարելու համար, ղեկավարվելով ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ մասով ՝ բժիշկ Արա Արամյանին զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից՝ մինչև 31/05/2021թ, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 200000 ՀՀ դրամի չափով:

4. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղին Սարգիս Ասոյանի կողմից հանդիպման գլխավոր մրցավարին բռունցքով հարվածելու, վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ թույլ տալու համար՝ միջնորդություն ներկայացնել ՀՖՖ Գործադիր Կոմիտեին՝ հաստատված փաստական հանգամանքների հիման վրա և ՀՖՖ Կանոնադրության կիրառումն ապահովելու նպատակով քննարկելու «Գանձասար-Կապան» ՖԱ-ի նախկին աշխատակից Սարգիս Ասոյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպը:

5. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) հանդիպումից հետո տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ ՀՖՖ մրցավարական դպրոցի պատասխանատու Կարեն Նալբանդյանի մասով ՀՖՖ-ում անցկացնել ծառայողական քննություն:

Նախագահ՝	Ռուբեն Սինոյան
Քարտուղար՝	Հայկուհի Ռշտունի
Անդամներ՝	Վահան Բերակչյան
	Բաբկեն Ղալոյան
	Արման Ալաբերքյան
	Տիգրան Իսրաելյան

Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից յոթ օր հոտո և կարող է բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ այն ստանալու պահից (ներառյալ էլեկտրոնային փոստի միջոցով Որոշման ստացումը յոթ օրվա ընթացքում:

Շահագրգիռ անձինք կարող են ստանալ Որոշման համար հիմք հանդիսացող նյութերը և/կամ բողոքարկել Որոշումը ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ ffa@ffa.am էլեկտրոնային փոստին համապատասխան դիմում ներկայացնելով, որին կկցվի ՀՖՖ համապատասխան հաշվին 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ վճարման անդորրագիրը: Վճարումը հաստատող փաստաթղթի բացակայությունը հիմք է Բողոքարկման կոմիտեի կողմից գործը վարույթ չընդունելու համար: